

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բայի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անշարժական յանգուորներ. — Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հարկադրված նկատողութիւն. Սովետների
օգտին. Մատենագրութիւն. Նամակ Երանայի-
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժո-
ղովրդական ընթերցարաններ. Խաղաղութեան
հարցը Եւրոպայում. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ԲՈՐԱՍ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Ընտրողական գործերը Մոսկվայում:

ԱՆՁԱՓԱՀԱՍ ԹԱՆՅԱՌՈՒՆԵՐ

Թանգաւորների շարքում, ինչպէս յայտնի
է, յաճախ գտնվում են անշարժական անձինք,
պատանիներ, որոնք մի քանի ամիս կամ
մի քանի տարի բանտը նստելուց յետոյ,
բոլոր են գալիս և նորից մտնում հաս-
տիակութեան մէջ: Այդ պատանիները ըստ
մեծի մասին դեռ կազմակերպված եղե-
նագործներ, յանցանք բնաւորութիւններ
չեն, նրանք իրանց առաջն ունեն շատ
տարիներ, մի ամբողջ ապագայ: Նրանց
յանցանքի պատճառը լինում է յաճախ
անգիտակցական, վատ կրթութիւնից կամ
չբաւարարութիւնից առաջացած:

Պատանին ընկնում է բանտ այնպի-
սի հասակում, երբ նրա վրա ամեն մի
հանգամանք, ամեն մի երեւոյթ ուժեղ
ապաւորութիւն է թողնում: Իսկ բանտը ոչ
մի բարեբար, ոչ մի կրթողական տարր չու-
նի իր մէջ: Ընդհակառակը, նա ամե-
նաձանր պղծութիւն է թողնում յան-
ցաւորի վրա կամ կոշտացնելով և կամ
ճշնշկով ու մաշկով մարդու ամբողջ էու-
թիւնը:

Վարդաց իրաւաբանները և հասարակա-
կան գիտութիւններով զբաղվող մարդիկ
միջոցներ են որոնում ոչնչացնելու և թել-
աչնելու բանտերի փաստակար ազդեցու-
թիւնը, կամ աշխատում են փոխարինել
բանտերը այնպիսի հիմնարկութիւններով,
որոնք յանցաւորների համար կրթող միջո-
ցներ են ստեղծում:

Այդպիսի միջոցներից մէկն է և Երկրա-
գործական կօլօնիաներ անուանով կա-
ռուցման հիմնելը յատկապէս պատանի
յանցաւորների համար: Պատանիներին հա-
նում են բանտից և ուղարկում այդ կօլ-
օնիաները, ուր նրանք մի քանի տարի շա-
բուսակ պարապելով մի կողմից ազատ-
ված են լինում բանտի փաստակար ազդեցու-
թիւնից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԳՐՈՒԹԵՐԻ ՄՕՍԿՎԱՅԻՄ

Ապրիլի 3-ին, Մոսկվայում կատարված եկեղե-
ցական խորհրդի անդամների և երէցփոխի ընտ-
րութիւնը մինչև այժմ չարունակում է խօսակե-
ցութեան աւարկայ լինելը:

Կովկասում հաւանականօրէն շատ քչերին յայտ-
նի կը լինի, թէ ինչպէս են կառավարվում Մոսկ-
վայի և Պետերբուրգի հայոց եկեղեցիներն ու
եկեղեցապատկան կառուածները: Արևու մայրա-
քաղաքների հայոց եկեղեցիներն ու նրանց կա-
ռուածները կառավարվում են մի առանձին կանո-
նադրութեամբ, որ հաստատված է կառավարու-
թեան կողմից:

Այդ կանոնադրութեան համաձայն երկու մայ-
րաքաղաքների հայոց եկեղեցիներն ու նրանց
կառուածների կառավարութիւնը գտնվում է ե-
կեղեցական խորհրդի ձեռքում, որ բաղկացած է
վեց անդամներից: Այդ քաղաքներից ամեն մի-
կում խորհրդի անդամներն ընտրում են ծխական-
ները իրանց միջոց:

Մոսկվայի հայոց եկեղեցիների շարժական ու
անշարժ կալքի արժողութիւնը հասնում է մօտ

թիւնից, միւս կողմից ընտելանում են ա-
ռողջարար աշխատանքի, որ յաճախ նրանց
համար ապագայ ապրուստի միջոց է գտա-
նում:

Այդ տեսակ կօլօնիաներ հիմնելու կա-
րելութիւնը կովկասում զգացված է մի
քանի տարի առաջ, երբ այդ գործին հա-
մակող մի խումբ անձինք մշակեցին ան-
շարժական յանցաւորներին օգնելու ընկե-
րութեան կանոնադրութիւնը, և առաջար-
կեցին կառավարութեան հաստատութեան:
Ընկերութեան գլխաւոր նպատակն է հիմնել
երկրագործական կօլօնիաներ անշարժական
յանցաւորներին համար:

1891 թ.ի նոյեմբերի 20-ին հաստատվեց
այդ կանոնադրութիւնը և այդպիսով ընկերու-
թիւնը պաշտօնապէս հիմնվեց: Կարճ մի-
ջոցում Ժողովից մինչև 22 հազար ռուբլի
փող Սովայն գտնաւոր հանգամանքների
շնորհով մինչև այժմ ընկերութիւնը չէ
սկսել իր գործունէութիւնը: Ներկայումս
Թիֆլիսի գտնաւոր ազգութիւններին պատ-
կանող ինտելիգենցիայի մի շրջանում նո-
րից յարուցված է երկրագործական կօլ-
օնիա հիմնելու միտքը և յոյս կայ, որ այս
անգամ նա աջող ընթացք կը ստանայ և
կարելի կը լինի այդ օգտակար գործը ի-
րականացնել կեանքի մէջ:

Այդ նպատակով մայիսի 9-ին կայացած
մի մասնաւոր Ժողովում, որին ներկայ էին
այդ հարցին համակող մի խումբ անձինք,
որոշվեցին մի քանի կէտեր, որոնցից զլուս-
ւորները հետեւեալներն են:

Առ այժմ, իրեն առաջին փուլ, հիմնել
միայն 20 անձանց համար երկրագործական
կօլօնիա: Կօլօնիան հիմնել մի այնպիսի
տեղում, ուր կարելի լինի ուսումնասի-
րել և այդեզործութիւն, որ աւելի շա-
հաւէտ է, քան միայն հասարակ դաշտում
շահութիւնը: Այդ տեսակ կօլօնիայի հա-
մար կառավարութիւնը իր կողմից խոս-
տանում է յատկացնել ձրիաբար արքունա-
կան հող:

Յանկանում ենք, որ միանգամայն հա-
մակրելի և օգտակար այդ գործը կարողա-
նայ շուտով իրականանալ, որով կարելի
կը լինի բանտի ձեռքը և քայքայող միջո-
ցներից ազատել բազմաթիւ անհաւա-
հաս յանցաւորներին, և միջոց տալ
նրանց նորից ուղիղ ձանադարհի վրա
կանգնելու:

400 հազար ռուբլու, որից տարեւ 14 հազար
ռուբլուց աւելի եկամուտ է ստացվում Այդ ե-
կամուտից խորհրդը ուժեղ է տալիս բանա-
ններին և եկեղեցական սպասարարներին, որ կա-
նոնադրութեամբ մի անգամ ընդ միշտ որոշված է
և խորհուրդը իրաւունք չունի աւելացնել կամ
պակսեցնել, ծախսում է եկեղեցու անհրաժեշտ
կարիքների ու կառուածների կառավարութեան
համար: Այսուհետև խորհուրդն իրաւունք ունի
այդ եկամուտից նպաստ տալ գանապան ուսում-
նարանական և բարեգործական հիմնարկութիւն-
ներին, օգնել չքաւոր ծխականներին, ուսանողնե-
րին և այլն: Կանոնադրութեան այդ վերջին կէտը,
չը գիտենք ինչպէս է եղել առաջ, սակայն վերջին
թիւնը կանոնադրութեան այդ վերջին կէտը,
խորհրդի անգամ են ընտրվում սովորաբար այն-
պիսի մարդիկ, որոնք եկեղեցու փողերը աւելի
շուտով ջուրը կածեն, քան թէ այդպիսի նպա-
տակների վրա կը ծախսեն կանոնադրութեան
այդ ամենահամակրելի կէտը անցնել տարվա
հաշիւ մէջ այսպէս է իրագործված: Եկեղեցու
բախտի թեմական զգարանացին նպաստ 250 ռ.,
բանտարկեալներին և կօլօնիան 11 ռ.: Եկեղե-
ցական կառուածներից ստացված 14,553 ռուբլուց
միայն 261 ռ. է ծախսված բարեգործական նպա-
տակով: Երևում է, որ խորհուրդը կազմող վեց
անդամների բոլոր բարեգործական ընդունակու-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱԳԻՐԱՆՆԵՐ ԿԱՍՏՈՒԹԻՒՆ

«Արձագանքի» վերջին համարում տպագրված
է մի յօդուած Բաթումից, որի անտարադիր հե-
ղինակը յայտնում է, որ «Մշակի» խմբագրութիւ-
նը չէ տպագրել այդ յօդուածը, որ մի խումբ
մարդկանց ստորագրութեամբ ուղարկված է եղել
մեզ, և այդ պատճառով նոյն յօդուածը ուղարկել
են «Արձագանքին»:

Մենք զարմանում ենք մարդկանց անբաղաւ-
արութեան և նոյն իսկ յանդիմութեան վրա:

Խորհրդութեւնը այս է: Բաթումից մենք ստանում
ենք մի յօդուած քահանայական հարցի մասին:
Այդ յօդուածը գրված էր ապրիլի 29-ից: Մենք
ստանում ենք մայիսի 2-ին: Եւ ահա անցնում է
միայն չորս օր, այն է մայիսի 6-ից, նոյն յո-
դուածը ուղարկվում է «Արձագանքին»: Հասարակ
քաղաքավարութիւնը պահանջում է նախ իմանալ,
թէ արդեօք յօդուածը տպագրվելու է, թէ ոչ, և
ապա միայն դիմել օրինելու ու հայտնել: Վերջա-
պէս բաւական թեթեւամտ պէտք է լինել կարծե-
լու համար, որ մենք հնարաւորութիւն և տեղ ու-
նենք չորս օրով ընթացքում տպագրել մի ա-
հագին յօդուած, մինչդեռ շատ յօդուածներ չա-
բայեցան, նոյն իսկ ամիսներով, իրանց հերթին
են տպագրում «Մշակը» մի օր և է «Արձագանքը»
չէ, որը բերանը բաց յօդուածների է տպագրում,
և ստացած թուղթին ապարան ուղարկում, նրաթ-
չունենալով պատճառով:

ձեռքարկ է, մենք համաձայն չենք Բաթումից
ստացած յօդուածի մէջ յայտնած մի քանի կարծի-
քներին, մասնաւոր ուր իսկապէս դրանք կարծի-
քներ չեն, այլ հայտնաբեր Արիստակէս եպիսկոպո-
սի հասցէին և չորսօրեթիւն Արեւի երկրի
հասցէին: Բայց և այնպէս մենք վճռել էինք տպո-
գրել այդ յօդուածը, նախ այն պատճառով, որ
պարզիկ Բաթումի գործարան հանդիպէր դարձած
քահանայական հարցը, և երկրորդ՝ որպէս զի
միջոց ունենանք բացատրել յօդուածագիրնե-
րին երկու կէտ՝ մէկը ուսում առած քա-
հանաների առաւելութիւնը, և միւսը այն, որ
նոյն իսկ Խորհրդանի կաթողիկոսութեան օրով
անարժան և անպիտան մարդիկ կարող են կա-
ռուակերութիւն անել, հակառակ Կաթողիկոսի
ցանկութեան և գիտութեան, — մի տարրական

թիւնները հաղիւ են հանում 261 ռուբլի արժո-
ղութեան:

Բայց այդ բանի մեղքը միայն խորհրդի ան-
գամների վրա չէ ընկնում, այլ աւելի ևս այն
ծխականների վրա, որոնք իրանց անտարբերու-
թեամբ նպաստել են այդպիսիների ընտրու-
թեանը:

Կանոնադրութեան համաձայն տարեւ մի ան-
գամ լինում է ծխականների Ժողով, որ ընտր-
վում են խորհրդի անդամները և երէցփոխը: Ե-
րէցփոխի նշանակութիւնը կրկնապատկում է նը-
րանով, որ «Գասպարեան անկեղանցի» կանո-
նադրութեան համաձայն, երէցփոխը համարվում է
նախ անգամ Գասպարեան անկեղանցի խորհրդի:
Այդ վերին աստիճանի մարդասիրական հիմնա-
կութիւնն էլ, չը նայելով իր լայն ու բազմակող-
մանի ծրագրին և հարուստ միջոցներին, մինչև
այժմ մոռնալ ձեռնարկում գտնվելով, դարձել է մի
կատարեալ մոռնալ և ապարդիւն հիմնարկութիւն:
Բայց «Գասպարեան անկեղանցի» մասին մի ու-
րիշ անգամ:

Ամեն տարի երկու — երկու անգամ հերթով
գուրս են գալիս խորհրդից և նորին ընտրվում,
կարող են վերընտրվել և հնարել Ընտրութիւնները,
ինչպէս և խորհրդի կազմում տարեկան նախահա-
շիւը հաստատվում են Բնաւորաբայի թեմական
առաջնորդից: Պետերբուրգի և Մոսկվայի եկեղե-

միտք, որ Բաթումի տնաւ յօդուածագիրները ըն-
դունակ չեն հասկանալու: Վերջապէս մենք վրձ-
նել էինք տպագրել յօդուածը և այն պատճառով,
որ նրա ճակատին գրված էին հետեւեալ ա-
ղերսական տողերը. «Միգանց չատերը կով-
կասեան թերթերից ամենից շատ «Մշակին»
համակրած լինելով, և համարեա թէ նրանից զատ
որ և է մի թերթ չը կարգաւ պատճառով,
«Մշակում» ցանկանում ենք նրա տարակված տես-
նել: Քաղցր է մեզ յուսաւ... Հակառակ դէպ-
քում մենք ստիպված կը լինենք թարգմանե-
լով արան՝ նրա տարակութեան աղ ուս մի թերթե-
րում»:

Եւ ահա այդ խօսքերը գրեւոր միայն չորս
օր անցած, նոյն մարդիկ, որոնք «Մշակից»
զատ ուրիշ թերթ չեն կարդում, և որոնք այնքան
արհամարհում են այդ «ուրիշ թերթերը», որ
վճռել էին, երբ «Մշակը» չը տպագրի՝ դիմել ուս-
թերթներին. — նոյն մարդիկ, ստում ենք, դուրս են
գալիս այդ «ուրիշ թերթերի» մէջ, և այն էլ
հայտնաբերով «Մշակի» դէմ...:

Հարցնում ենք, կարելի է միթէ այդ բոլորից
յետոյ նշանակութիւն տալ այդ տեսակ մարդկանց
կարծիքներին: Ի հարկէ, ոչ: Ուստի շատ ուրախ
ենք, որ այժմ մենք բարոյապէս ազատ ենք,
և հանդիստ խղճով կարող ենք այդ յօդուածը չը
տպագրել և դամբարան դնել:

Մենք դեռ չենք խօսում այն մասին, որ մեզ
ուղարկված յօդուածի ստորագրողները մեզ բոլո-
րովին անձանօթ մարդիկ են, մի և նոյն ձեռքով
տաւն, տաւն և հինգ մարդու անուն է ստորագր-
ված, և մինչև այսօր էլ չը գիտենք, թէ ով է
այն անձը, որ երաշխաւոր է այդ ստորագրու-
թիւնների համար և նախաձեռնողը այդ գործին:
Եթէ այդ մարդը «Արձագանքին» դիմել է, ինչու
է թագնում իր անունը:

Յաւում ենք, որ ստիպված ենք այդ տեսակ ազ-
նուութեան և քաղաքավարութեան տարրական դասեր
տալ մարդկանց, որոնք համարակալութիւն ունեն
հրապարակ զուրս գալ՝ հասարակական խնդիրներ
պարզելու:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՕՐՏԻՆ

Ստացանք Կարօի և Երևանի նահանգների ու
գաղթական սովետների օգտին:

1) Պրիշիբից, Վ. Ս. Մոսկովեանի միջոցով

ցական խորհուրդների մշտական նախագահ հա-
մարվում է իշխան Աբամէլք — Ազարեանը, որը
եկեղեցական գործերի վերաբերմամբ անմիջական
յարաբերութիւն է ունենում հոգևոր իշխանութեան
հետ: Նախագահական իրաւունքը առաջութեան
կարգով ժառանգաբար անցնում է իշխան Աբամե-
լք — Ազարեանի արական սեռի ժառանգներին:

Ինչպէս յայտնի է, մեր Ամի կան մի գաւի մար-
դիկ, որոնք ընտրութեան դէմ ոչինչ չեն ունե-
նում միայն այն դէպքում, երբ ընտրվողները ան-
պատճառ իրանք են լինում, կամ «Իրանցից» են
լինում: Այդ մարդկանց տիպը առհասարակ ամեն
տեղ շատ լաւ յայտնի է: Գրանք սովորաբար կոկ-
լիկ, չաղիկ մարդիկ են, շատ խիստ զգացող ի-
րանց արժանապատուութիւնը, բայց, սակաւ բացա-
ռութեամբ, բոլորովին դուրի որ և է արժանա-
ւորութիւնից: Այդ մարդիկ մի տեսակ ներքին
ընազդմամբ դէմ են ամեն բանի, ինչ որ ապրում,
այն լէշով են կերակրվում: Այդ յատկութիւնը հե-
տեանք չէ տղիւթութեան և ոչ նոյն իսկ անգրա-
գիտութեան, որ ինչպէս յայտնի է, մեզանում դեռ
արդիւղ հանգամանք չէ հասարակաց պաշտօններ
վարելու համար:

Այդ յատկութեամբ առատապէս օժտված են
և շատ պաշտօնապէս կրթված համարվող մարդիկ:
Եթէ զրանց խօսեցնենք, առանց կարծիք ունեղու-

Ջելով Ռուսաստանում լոյս տեսնող միւս յայտերի հանդէսներէն, ինչպէս են, օրինակ, «Вѣстникъ Европы», «Русская Мысль» և այլն, բաժանորդագրի կողմից էլ (տարեկան 9 ռուբլի) շատ մատչելի է հասարակութեանը:

Յօդու ա Քրիստոս Արժուէն ու ա ճանի և գրուածքների տպագրութեան ստացանք. Բերքից, Փաշայ Մէլիք-Բարամանցի միջոցով հանգանակած 18 ռուբլի: Նորիդներն են. Ա. Ղազարեան 3 ռուբլի, Վ. Վեդիբեանց և Փ. Բ. Մէլիք-Բարամանց 2-ական ռուբլի, Ա. Յովսէփեանց, Բ. Բ. Արքուստեանց, Ս. Յովհաննէսեանց, Ա. Ներսէսեանց, Ս. Աբգարեանց, Յ. Գեորգեանց, Աղաջան Հախումաբեանց, Բ. Մէլիք Օհանջանեանց, Դ. Սէկմանեանց, Ա. Սաղաթեանց, Ս. Գ. Գասպարեանց 1-ական ռուբլի: Ռուսիան նախկին 3188 ռուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3206 ռ. 28 կոպէկ:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻՅ մեղ գրում են մայիսի 5-ից «Ամսիս 8-ին, կիրակի օր, նշանակված է հայոց եկեղեցու ծխականների ընդհանուր ժողով, որը պէտք է ընտրի խորհրդի մի քանի անդամներ, դուրս գնացողների փոխարէն: Ընտրութիւնների համար պատրաստութիւններ են տեսնվում»:

ԲԱՌՈՒՄԻՅ մեղ գրում են. «Հաստատ աղբիւրից իմացանք, որ Ա. Մանթաշեանի գրասենեակի գործարանի բոլոր ծառայողները վճել են չորս ամիս շարունակ իրանց առճկի 30/50 յատկացնել սովետների օգտին: Յանկայի էր, որ դառնց օրինակին հետևելն թէ այստեղ և թէ մանաւանդ Բաղուի զանազան ֆիրմաների ծառայողները, որով մեծ օգուտ կը տան խեղճ և սովետաւոր ժողովրդին: Ի դէպ, կարող ենք հարգել, որ այստեղի մշտական թատերադերձները խումբը վճել է մի ներկայացում տալ յօգուտ սովետաւորին»:

ԳԱՐԱՆՍՈՐԱ գիւղից մեղ գրում են. «Անցեալները Թիֆլիսից եկել էր Վերին-Աղբան գիւղը իրաւաբան Սամուի Գարու թիւնեան, որը նոյն գիւղացի է: Նա ժողովրդով հասարակութիւնը, խօսելու ուսումնարանի նշանակութեան մասին: անմիջապէս հասարակական վճով խոստացան շինել նոր ուսումնարան և աւարտել սեպտեմբերին: Շինութեան վրա գնալից փողը պ. Գարու թիւնեան խոստացաւ լրացնել, իսկ քարը և այլ իրեղէնները գիւղացիները յօժարակամ յանձն առան հայկայից: Այժմ ամեն օր գիւղացիները բանում են ուսումնարանի շինութեան տեղի վրայ: Այսպիսով Ղազարեանը եղած ուսումնարանների վրա աւելանում է և մի նոր ուսումնարան. գիւղը բարեկացած է մօտ հարիւր տնից: Ռուսաւորները շինվելու է երեք սենեակից, միգասեն, բայց երկսեն: Ռուսաւորների մեկարդակը յանձն է առել ճիւղաբար պատրաստել պ. Սպարեղեան: Ի դէպ, չը մոռանանք արձանագրելու մի տխուր իրողութիւն. յիշեալ գիւղի քահանան 1890 թ.ին խոստացաւ իր սեփական շինութիւնը յատկացնել ուսումնարանին, և պարտաւորվեց վեց հազար ռուբլի բանել դնելու, որ դրա տուկոսով ուսուցչի վարձը հատուցանվի: Դրա համար էլ այն երանելի ժամանակներում ստացաւ հայրապետական օրհնութեան կնիքակ և իսկ կրելու իրաւունք: Տարաբարդաբար, այս բարի գործը մնաց մեռած թուղթ, որը փոստ է հագեար արխիվներում...»:

ՄՈՉԻՍԻՅ մեղ գրում են. «Չենք կարող հրապարակով չը վկայել, որ Աստրախանից հաղորդած այն լուրը, թէ վերջին տարիներս Աստրախանի թեմում սուրհիկի նման բուռն տղէտ քահանաներ—մի դուռն ճշմարտութիւն է: Ոչ թէ միայն փոքրիկ աւաններում, այլ նոյն իսկ մեծ քաղաքներում փոքր ի շատէ օրինաւոր, կրթված, աչքի ընկնող քահանաներ բացառութիւն են կազմում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐ

Այդ վերնագրով մի փոքրիկ յօդուած է տպված «Frankfurter Zeitung» լրագրում, որի հեղինակն է Գոլտար Արտուր Պֆունզստ, և որը ծանօթացնում է ժողովրդական ընթերցարանների կազմակերպութեան հետ զանազան երկրներում:

Գերմանիայում գոյութիւն ունի մի ընկերութիւն:

Թիւն է թիւական կուտորայի համար, որի նպատակն է հիմնել զանազան քաղաքներում ժողովրդական ընթերցարաններ և ժողովրդական գրադարաններ: Ֆրէյբուրգում և Բրէսլաւիում արդէն կան այդպիսի ընթերցարաններ, Բերլինում մտադրութիւն կայ հիմնել ընթերցարան մեծ ծառայով: Նոյնպիսի մի ընթերցարան հիմնում է Բրիւքսելում և Ֆրանկֆուրտում:

Ժողովրդական կրթութեան գործը որքան էլ բարձր է կանգնած Գերմանիայում, սակայն այդ կողմից Գերմանիան տեղի է տալիս Անգլիային: Անգլիայում ժողովրդական ընթերցարանների զարգացման գործը աւելի լայն հիմունքների վրա է դրված: Դեռ 1852 թ.ին Մանչէստրում հիմնվեց առաջին ընթերցարանը գրադարանի հետ միասին: Հէնց առաջին տարին ընթերցարանը այցելեցին 61,000 հոգի 300,000 քնակիցներից: Այդ տեղի ունէր պարտաւորիչ ուսումն ժողովուրդը քսան տարի առաջ: Ընթերցարանը հիմնվեց քառասուն տարի յետոյ, այդ ընթերցարանը այցելում էին արդէն 3 միլիոն հոգի, երբ Մանչէստրը 400,000 բնակչութիւն ունէր: Գոյժի զարգացման հետ միասին՝ աւելացան և ընթերցարանի բաժանմունքները. նրանց թիւը ներկայումս 12 է բաղադրի զանազան մասերում: Դրա հետ միասնապէս գրադարանը գնալով ձեռք էր բերում գրքերի և հրատարակութիւնների մեծ քանակութիւն:

Իրաւ է, Անգլիայում և Միացեալ-Նահանգներում այդ նպատակով առատ նուիրաբերութիւններ են ստում, որոնց չափերի մասին ուրիշ երկրներում համակցողութիւն անգամ չունեն, բայց ժողովրդական ընթերցարանները իրանց համար ճանապարհ են հարթում և այն երկրներում, ուր առատ նուիրաբերութիւններ չեն լինում: Օրինակ, Շվեյցարիայում, քսան տարի առաջ, մի մասնաւոր ընկերութիւն հիմնեց Յիւրիկում մի ընթերցարան բանտների համար: Այդ ընթերցարանը բաց է հոկտեմբերի 1-ից մինչև յունիսի 20-ը առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը, ճաշից յետոյ 11/2-ից մինչև 10 ժամը, յունիսի 20-ից մինչև մարտի 15-ը առաւօտեան 8 ժամից մինչև երեկոյեան 10 ժամը, իսկ մարտի 15-ից մինչև մարտի 30-ը առաւօտեան 8-ից մինչև 13 ժամը և երեկոյեան 11/2-ից մինչև 10 ժամը: Հոկտեմբերի 1-ից մինչև մարտի 30-ը ընթերցարանում եղել են 19,956 այցելողներ կամ միջին թւով օրական 93 մարդ:

Ընթերցարանն այցելողների թիւը առատանում է և եսաստիկ աճում է բանտների անդրօրէնութեան ժամանակ. շատերը թողնում են ընթերցարանը միայն ճաշի ժամանակ, այնպէս որ շատ դէպքերում ընթերցարանը փոխարինում է դարեջրատներին: Այդ եղբակացութեանն է եկել Սան-Գալլէի վարչութիւնը. նա ժողովրդական ընթերցարանները ամենալաւ միջոց է համարում արեցողութեան դէմ կուռելու համար և այդ պատճառով անհրաժեշտ է համարում ամեն կերպ նպաստել այդպիսի հիմնարկութիւնների բազմացնելու ժողովրդի համար: Յիւրիկի ընթերցարանում կան 70 շվեյցարական և ուրիշ լրագիրներ գերմաներէն, ֆրանսերէն, իտալերէն և անգլերէն լեզուներով, 8 պատկերազարդ հրատարակութիւններ, իսկ գրադարանն ունի մօտ 1200 հատոր գրքեր: Տեղական լրագիրներ ձրի են ուղարկում խմբագրութիւնները, իսկ արտասահմանեան լրագիրները ընծայում են ժողովրդական ընթերցարաններին համակցող անձինք. շատ հիւպատոսներ ուղարկում են իրանց հայրենիքը զանազան հրատարակութիւններ զանազան տեղերից:

Գրքերը տրվում են ընթերցանութեան համար հէնց ընթերցարանում, բայց մտադրութիւն կայ գրքեր տալ և տներում: Պահանջվող գրքերի թիւը օրական հասնում է 45-ի: Այցելողների համար կան թուղթ, ծրարներ և գրելու այլ պարագաներ, որոնք ձրի են տրվում: Թող են տրվում նոյնպէս մի քանի խաղեր, օրինակ լոտո, զամբնո և այլն:

Ընթերցարանի բիւջէտը հասնում է 4,200 ֆրանկի. տան վարձ տրվում է 1500 ֆրանկ, լուսաւորութեան և վառելիքի, լրագիրների, ամսագիրների և գրքեր բերել տալու համար ծախսվում է 375 ֆրանկ, յայտարարութիւնների վրա ծախսվում է 315 ֆրանկ և զանազան ուրիշ պէտքերի համար, օրինակ ժողովրդական կոնցերտների կազմելու և պատմական ծախսերի համար 561 ֆրանկ: Բիւջէտը ծածկվում է կամաւոր նուիրատուութիւններով:

Բոլորնայով կազմվում են, բացի դրանից, կօնցերտներ՝ ժողովրդի համար և դասախօսութիւններ՝ բանտների համար: Եթէ ընթերցարան չը լինէր, մօտ 17,000 մարդիկ ապաստարան կունէին դարեջրատներում, իսկ այժմ նրանք հնարաւորութիւն ունեն ժամանակն անցկացնել ընթերցանութեան և շարունակել իրանց կրթութիւնը: Հաղել թէ կարելի լինէր ցոյց տալ մի ուրիշ հանրօգուտ ձեռնարկութիւն, որը այդքան չնչին ծախսերով այդքան շատ օգուտ բերէր: Թէ որպիսի նշանակութիւն են ստացել ժողովրդական ընթերցարանները Անգլիայում երևում է նրանից, որ չը նայելով հողատիրականութեան դեմադրութեանը, դեռ 1878 թ.ին աջողկեց իրաւունք ստանալ, որ ընթերցարանները բաց լինեն և կիրակի օրերը:

ԽԱՂԱՂՈՒԹԱՆ ՀԱՐՑՆ ԵՄԲՈՒՄՈՒՄ

Խաղաղութեան և դիմաթափութեան գործը և եռանդուն քաղաքացիների թիւին պատկանում է և ֆրանսիայի լակայ: Այդ նպատակով նա ճանապարհորդում է Եւրոպայում, անցեալ տարի նա Բերլինում էր, ներկայումս էլ գտնվում է Հռօմում:

Այս օրերս լակայ հրապարակապէս բացատրեց իր գաղափարները Հռօմի մի ընկերութեան մէջ: Ի միջի այլոց նա հաղորդեց Բերլինից դուրս բերած իր տղաւորութիւնների մասին: Գերմանական ժողովրդի ահալին մեծամասնութիւնը, ասեց նա, ամենին չէ երազում պատերազմի մասին. նոյնը պէտք է առել և պաշտօնական չըրջաւորների մասին: Մինչև անգամ գերմանական բարձրաստիճան օֆիցերները կատաբեալ համակրութեամբ էին վերաբերվում լակայի գաղափարներին: Այժմ Բերլինում միայն երկուստարդ օֆիցերներն են պատերազմի կողմնակից: Լակայ Բերլինում էր գտնվում հէնց այն ժամանակ, երբ բանակցութիւններ էին կատարվում ուսուցիչական առերաւան դաշնագրի կապելու համար: Երբ բանակցութիւնները աշդողութեամբ պատկզկեցին, մի բարձրաստիճան անձն, ուրախ ուրախ տանց լակային. «Այժմ խաղաղութիւնը ապահովված է գոնէ տասը տարով»:

Լակայ համոզված է, որ խաղաղութեան գործը աւելի աշդ ընթացք կը ստանայ, եթէ զարգը մանուկ սերնդին ներշնչէ սէր դէպի խաղաղութիւն և եթէ մամուլը անդադու և անընդհատ քաբողէ խաղաղութեան և համաձայնութեան անհրաժեշտութիւնը: Շատ մեծ նշանակութիւն է տալիս լակայ և առերաւան դաշնագրիներին:

ՆԱՄԱԿԱ ՊԱՐՍՊԱՍՏՆԵՅ

Թաւրիզ, մայիսի 1-ին
Ապրիլի 30-ին, երեկոյեան, Արամեան դպրոցի թատրօնական դաշիճում կայացաւ, յօգուտ Թաւրիզի Հայունհաց ընկերութեան, մի ներկայացում: Նախ քան ներկայացման մասին խօսելը, երկու խօսք ասեց Թաւրիզի Հայունհաց ընկերութեան մասին: Հայունհաց ընկերութիւնը ահա երրորդ տարին է, որ բոլորում է իր գոյութեան չըջանը. նրա գործունէութիւնը պայմանաւորված է բարեգործական նպատակով—նպատակ Լիւլալի դպրոցի չքաւոր աշակերտներին հաղուստով և այլ դասական պիտոյներով: Բայց ինչիւրը նրա գործունէութեան նիւթական կողմի մասին չէ, որը թերեւ մի աչքի ընկնող բան չը համարվի. խնդիր այն բարոյական ազդեցութեան մասին է, որ այդ տեսակ ընկերութիւնները առհասարակ ունենում են հասարակական կենցաղի վրա: Այդ տեսակ բարոյական ազդեցութեան աւելի պէտք ունի Թաւրիզը: Ներկայ տիրող պայմանների և անընդադու հանգամանքների մէջ Հայունհաց ընկերութիւնը մի շատ ուրախալի երեւոյթ պէտք է համարել, որով թաւրիզցիի սեփական կենսական պարզ վարդայ կինն է, զգալով իր պարտականութիւնը դէպի հասարակական դործունէութիւնը, աշխատում է թող յոյժերով, աննպաստ հանգամանքներում, նպաստած լինել հասարակական ընդհանուր զարգացման գործին:

Սակայն, ցաւելով պէտք է ասել, որ ընկերութիւնը երեք տարւայ գոյութեան ընթացքում չառաձանադական է գործել: Պէտք է աշխատել, որ ընկերութեան գաղափարը աւելի և աւելի տարածվի Թաւրիզի հայ կանանց խաւերի մէջ: Որովհետեւ ընկերութիւնը այսպէս թէ այնպէս իր գործունէութիւնը բացառապէս նուիրել է Լիւլալ Թաւրիզի ուսումնարանին, ուստի անհրաժեշտ էր, որ ընկերութեան անդամներին ծնողներին բաղկացած մի քանի ժողովներ անէին, հասկացնէին նրանց իրանց ծնողական պարտաւորութիւնները դէպի զարգը և դէպի իրանց որդիքը: Մեր կարծիքով, կանանց ընկերութիւնը ձեռնահաս է այդ անկու:

Այժմ անցնելը ներկայացման: Ներկայացրին ֆրանսերէնից թարգմանած «Օռէլի» պիէսը, և «200 000» կատակերգութիւնը: Պէտք է խոստովանել, որ խաղը անցաւ շատ սառը. դերակատարները անաշուղ կատարեցին իրանց դերերը, մինչև անգամ դերերը չէին սովորել: Ներկայացման վերջին կցած էր երկու երգ, որը խիստ աններգաշնակ անցաւ, մանաւանդ «բոլորական մարչը»:

Ներկայացման ժամանակ բուֆետը կառավարում էին ընկերութեան անդամներինը, մի երկուք՝ որ առաջին անգամն է տեղի ունենում Թաւրիզում: Կինը այստեղ, չնորձիւ տիրող կարգերի, միշտ խոյս է տուել մարդկանց հասարակութիւնից, համարելով այդ անվայել թէ բարոյականութեան և թէ կնոջ կոչման տեսակետից: Ուստի մեծ ուրախութեամբ պէտք է արձանագրել ամեն դէպք, երբ կինը հանդէս է գալիս, երևում է տղամարդու առաջ և հասարակութեան մէջ: Այդպիսի դէպքեր Թաւրիզում դեռ նորութիւն են, և գուցէ մասամբ խորթ և տարօրինակ, բայց կոտկած չունենը, որ հին, փառք կարգեր, սովորութիւնները հեղհեղեղ կը քանդվեն, կաւերվեն, ազատվում կանանց հասարակութիւնը խաւարի թաղաւորութիւնից:

Անցեալ ապրիլի 10-ին, առաջնորդարանում, կայացաւ Բերդաթաղի «Արամեան» և «Ս. Աննայի» դպրոցների հոգաբարձութեան ընտրութիւնը: Ներկայ էր Բերդաթաղի հայ հասարակութեան մասաւորապէս կէսը: Չայների առաւելութեամբ ընտրեցին հոգաբարձուներ՝ պ. Եադ. Գորոյեան, Առատուր-բէկ Միքայէլեան, Զ. Տէր. Օհանեան, Ս. Յովնանեան, Ա. Բուդաղեան, Մ. Նազարբէկեան, Յ. Ֆենկերչեան, Ա. Աւագեան: Համաձայն զարգացման հին կանոնադրութեան, հոգաբարձուները պէտք է լինէին ութ հոգի, իսկ անձնափոխանորդներ չորս հոգի: Սպասում ենք Լիւլալայի դպրոցի հոգաբարձական ընտրութեան...:

Թեմական առաջնորդը մտաղիւր է մայիսին Ստամբուլի և այլ դաւառները շրջադաշու: Աւելորդ չէ յիշատակել, որ Արքայապետին բոլոր կողմերում կրթական, գործը վերին աստիճանի աննախնահիկի դրութեան մէջ է, ուստի և հարկաւոր է լուրջ ուշադրութիւն և եռանդուն գործունէութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագիրը հաղորդում է, որ խաղիան խոց իր յարաբերութիւնները Պարսկաստանի հետ, որը միմեջ բանակցութիւններ սկսել առերաւան դաշնագրի մասին:

«Figaro» լրագիրը հաղորդում է, որ Կարնո համաձայն է նորից իր թիկնածութիւնը դնել ֆրանսիական հանրապետութեան նախագահի պաշտօնի համար:

«Journal des Debats» լրագրի Լանդսի թղթականից գրում է. «Սորբոնութեան դէմ մարդաւոր Բրիտանական ընկերութիւնը տրտունջ է յայտնում, որ սորբոնների աւետուրը և կօտարաբանդան շատ մեծ չափերով են կատարվում Աֆրիկայի և Հարաւային Արաբիայի արեւելեան ափերում: Աղէն է կենտրօն այդ աւետորի Բնկերութիւնը մանաւանդ արդար զայրոյթ է յայտնում այն բանի դէմ, որ բրիտանական կառավարութիւնը ոչինչ միջոցներ ձեռք չէ առնում այդ չարիքի դէմ: Սորբոնի միջին գինը 300 ֆրանկ է»:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարի Միլիթ արքայով ըրոր յանցարարների թիւը, Սօսկայի լրագիրների խօսքերով, եղել է 10,000 հոգի երկու տեսից:

Ժողովրդական լուսաւորութեան միանաւորութիւնը յայտարարում է, որ ներկայ տարւայ օգոստոսի 3-ից մինչև 8-ը Սոսկայում կը գումարվի X-րդ միջազգային մի կոնգրէս, որը կը զբաղվի թէ Հիւսիսային և թէ Հարաւային Ամերիկայի պատմութեամբ, մինչև յարստօֆոր Կոլումբոսի ժամանակը:

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 43.